



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13, Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ. փոստ kotayk@mta.gov.am

-----N-----

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի՛ բուժաշխատողներ

Ընդունեք իմ ջերմ շնորհավորանքը մասնագիտական Ձեր տոնի՝ բուժաշխատողի օրվա կապակցությամբ: Մովորաբար այս տոնն առիթ է խոսելու բժշկի և, առհասարակ, բուժաշխատողի առաքելության, նվիրումի ու փրկված կյանքերի մասին:

Մասնագիտական տոնի կապակցությամբ ցանկանում եմ երախտիքի խոսքեր հղել մեր բժիշկներին, բուժքույրերին ու մայրապետներին, առողջապահության կազմակերպիչներին և բոլոր նրանց, ովքեր, հավատարիմ մնալով իրենց առաքելությանը, գիշեր ու ցերեկ մեծ նվիրումով պայքարում են մեր քաղաքացիների կյանքի և ապաքինման համար: Օրը նաև առիթ է ձեռքբերումներն ամփոփելու և առկա խնդիրներին անդրադառնալու: Առողջապահական համակարգը քիչ հաջողություններ չի արձանագրել բնակչության առողջության պահպանման, պատշաճ բժշկական օգնության տրամադրման գործում: Ինչ խոսք, կան նաև դժվարություններ ու չլուծված խնդիրներ:

Այսօր մենք ձեզ հետ միասին ոլորտում լուրջ փոփոխությունների իրականացման սկիզբ ենք դրել: Տոնական օրը չձանրաբեռնելով՝ միայն ընդգծեմ, որ սոցիալական ուղղվածություն ունեցող մեր բոլոր բարեփոխումներն իրենց արտացոլումն են գտել կառավարության ծրագրում: Դրանք մի կողմից միտված են բնակչությանն ավելի որակյալ և հասանելի բժշկական ծառայությունների ապահովմանը, մյուս կողմից՝ բուժաշխատողի պատվի ու արժանապատվության պաշտպանվածությանը:

Թույլ տվեք Ձեր տոնի կապակցությամբ մեկ անգամ ևս սրտանց շնորհավորել ինչպես Հայաստանում, այնպես էլ Արցախում և Սփյուռքում աշխատող մեր հայրենակից գործընկերներին: Առանձնահատուկ ուզում եմ շնորհակալություն հայտնել ռազմական բժիշկներին և սահմանամերձ համայնքների մեր բուժաշխատողներին, ովքեր հոգ են տանում հայ զինվորների և սահմանը պահող մեր հայրենակիցների առողջության մասին:

Բոլորիդ մաղթում եմ ամուր առողջություն և անձնական երջանկություն, լավատեսություն և հավատ առ այն, որ համատեղ ջանքերով կկարողանանք երկրի առողջապահական համակարգը դարձնել շատ ավելի լավը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Կատարող՝ Առողջապահության և սոցիալական
ապահովության վարչություն
☎ (0223) 2-37-58